

Մանուկներու Սուրբ Գիրքը  
կը ներկայացնէ

Պօղոսին  
հրաշալի  
ճամբորդութիւնները



Written by: Edward Hughes

Illustrated by: Janie Forest

Adapted by: Ruth Klassen

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant

funded by: Zareh Seropian & Sons Foundation

special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation

has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children

[www.M1914.org](http://www.M1914.org)

©2013 Bible for Children, Inc.

License: You have the right to copy or print this story,

as long as you do not sell it.



Պօղոս Եւ  
Շիլա, Յիսուսի  
ծառաները,  
բանտն էին:



Ո՛չ, անոնք  
յանցանք չէին  
գործած, միայն  
սատանայ  
մը հանած էին  
կնկայ  
մը  
մէջէն:



Անոնք ցոյց  
տուին հեթանոս  
կուռք պաշտող  
ժողովուրդին, ...




... որ Եփեսոս  
կ'ապրէր, իրաւ  
Աստուծոյ  
Եւ իր Որդիին  
Յիսուսի ուժը:




Այդ պատճառով  
անոնք  
ձերբակալուեցան,  
ծեծուեցան եւ  
բանտարկուեցան:






Թերեւս կը  
կարծես, որ  
Պօղոս եւ Շիլա  
զայրացած եւ  
բարկացած  
էին:









Սակայն  
ոչ: Այլ  
հակառակը, ...



... կես  
գիշերին  
անոթ  
նստան եւ  
փառաբան-  
ականներ  
երգեցին  
Աստուծոյ:







Մնացեալ  
բանտարկե-  
ալներն  
ալ իրենց  
ունկնդրեցին:



Յանկարծ, երգելը կանգ առաւ:  
Աստուած երկրաշարժ մը դրկեց,  
որ բանտը շարժէ: Ամէն դռները  
բացուեցան բոլորին շղթաները  
թուլացան:





Օ՛հ, օ՛հ: Բանտի  
պտասխանատուն  
վատահ էր, որ բոլոր  
բանտարկեալները  
փախած են:





Նոյնիսկ եթէ մէկ  
հոգի փախած ըլլար  
ինքը մահապատիժի  
պիտի ենթարկուէր:

Դժբախտաբար,

ան դուրս

հանեց իր

սուրը: Ան կրնար

ինքզինք սպաննել

այս եղածին

համար:



Բայց Պօղոս  
կանչեց. "Վնաս  
մի հասցնեք  
դուն քեզի,  
որովհետեւ  
մենք հոս ենք":



Երբ ան իրենց  
տեսաւ ըսաւ.  
"Պարոններ,  
ի՞նչ պետք  
է ընեմ որ  
ազատիմ":





Ուրեմն ըսին.  
"Չաւատայ  
Տիրոջ Յիսուս  
Քրիստոսի, եւ  
դուն պիտի  
փրկուիս,  
դուն եւ քու  
տունդ":



Բարեփախտաբար,  
բանտի

պատասխանտուն  
հեռացաւ:





Յաջորդ օրը  
Պօղոս եւ  
Շիլա ազատ  
արձակուեցան  
եւ տարբեր  
քաղաքներ  
ճամբորդեցին,  
Յիսուսին մասին  
պատմելով  
ժողովուրդին:






Շատեր  
հաւատացին,  
ուրիշներ  
փորձեցին վնաս  
հասցնել իրենց:  
Սակայն  
Աստուած իր  
ծառաներուն  
հետն էր:





Գիշեր մը,  
Պօղոս  
ժամերով  
քարոզեց:  
Երիտասարդ  
մը, որ բաց  
պատուհանին  
առջեւ կը նստեր  
խոր քունի  
մէջ մտաւ:





Կրնաս  
գիտնալ  
ինչ եղաւ:



Ամեն մարդ գիտեր,  
որ երիտասարդը  
մեռաւ:



Սակայն Պօղոս գնաց եւ  
փաթթուեցաւ անոր եւ  
ըսաւ. "Իր կեանքը  
իր մէջն է": Անոնք  
երիտասարդը  
ողջ ներս բերին  
եւ շատ ուրախ  
էին:







Պօղոս եւ Շիլա շատ մը արկածներ  
ունեցան իրենց ճամբորդութեան  
ընթացքին դէպի  
Եւրոպա:




Պօղոս մեծ արկածներէն մէկը տեղի  
ունեցաւ Նաւուն վրայ:




Այն ատեն պողպատեայ հսկայ  
նաւեր չկային, այլ  
արագաստանաւեր,  
...




... որոնք դիւրութեամբ  
կը ջախջախուէին  
փոթորկոտ  
օդին:






Պօղոս Նաւուն վրայ էր,  
որովհետեւ անգամ մը եւս  
ձերբակալուած էր:






Այս անգամ ան Հռոմի կայսրին  
առջեւ պիտի բերուէր:






Հո՞ւմ այդ ժամանակի աշխարհի  
մայրաքաղաքն էր:






Չօրաւոր փոթորիկներ նաւը  
դանդաղեցուցին, կարծես սոսկալի  
փոթորկոտ օր մը կը սպասէր:









Շատ դժուար պտոյտ  
մըն էր Պօղոսի եւ մնացեալ  
բանտարկեալներու՝ ինչպէս  
նաեւ նաւաստիներուն:




"Մարդիկ, ես կը տեսնեմ,  
որ այս ճամբորդութիւնը  
փորձանքով պիտի  
աւարտի",  
զգուշացուց  
Պօղոսի:




Նաևոն  
հրամանատարը  
կարեւորութիւն  
չտուաւ անոր  
խօսքին:



Եւ դէպի ծով  
ուղղուեցաւ:




Երբ հսկայ փոթորիկ մը  
անոնց զարնուեցաւ,  
անոնք պարաններով  
փաթթեցին  
նաւը  
յուսաւով,  
որ չի  
կոտորի:




Եթե նաևը կոտրեր  
բոլորին համար  
ալ ջուրը  
գերեզման  
պիտի  
ըլար:



Նաւը ծանրացած էր եւ նաւուն  
հրամանատարը  
հրամայեց  
բոլորը,  
որպէսզի  
թեթելցնեն  
նաւը:



Երրորդ օրը անոնք ամեն ինչ  
նաւուն մէջէն ծով նետած էին:  
Թերեւս այդ  
կ'օգնէր:





Այդ գիշեր, հրեշտակ մը կեցաւ  
Պօղոսին քով ըսելով, որ ամէն ինչ  
լաւ պիտի ըլլայ:




Բոլորը քաջալերուեցան,  
երբ Պօղոս ըսավ.



"Սիրտ առեք մարդիկ, որովհետեւ ես  
կը հաւատամ, որ Աստուած  
ամէն ինչ լաւ պիտի  
ընէ ինչպէս որ  
ինծի ըսաւ:



Եւ մենք մօտ կղզիի մը վրայ  
պետք է կանգ առնենք:"



Քանի մը օր ետք, Նաւը Մալթա  
կղզիին մօտ կանգ առաւ:  
Նաւը զարնուեցաւ  
ժայռերուն եւ  
չախչախուեցաւ:



Նաևուն հրամանատարը  
հրամայեց, որպեսզի լողալ  
գիտցողները նետուին  
եւ լողալով  
ցամաք երթան:



Մնացեալը նաև  
կոտորածներուն վրայ  
նաև արկելով ցամաք  
հասան:



Մալթայի մէջ,  
Աստուած իր ուժը  
ցոյց տուաւ:





Երբ անոնք տախտակ  
կը հաւաքէին կրակի  
համար, իժ մը  
խայթեց Պողոսին:  
Ժողովուրդը  
կարծեց, որ  
ան պիտի  
մեռնի:



Բայց իժի՛ն խայթոցը  
անոր վնաս չհասցուց:  
Ժողովուրդը կարծեց,  
որ Պօղոս  
Աստուած է:



Շատ մը հիւանդ  
մարդիկ քովը եկան,  
եւ Աստուած  
առողջացուց  
անոնց Պօղոսի  
աղօթքէն  
ետք:



Վերջապես, Պօղոս Յռոմ հասավ:  
Երկու տարի առաջ, որ իր  
դատական հարցը կարգի դրուի:

Այդ ժամանակի  
ընթացքին  
Պօղոս տուն  
մը վարձեց,  
ուր հիւրեր  
ընդունեց:



Գիտե՞ս, թե ինչ կը պատմեր Պօղոս  
իր այցելուներուն: Աստուծոյ  
արքայութիւնը:



Տեր Յիսուս Բրիստոս,  
ինչպես իր բոլոր  
ճամբորդութիւններուն  
մէջ:




"Ես լաւ կռիւը կռուեցայ, ես  
մրցումը վերջացուցի, ես իմ  
հաւատքս պահեցի",

գրեց

Պօղոս

Յոնմէն:



Սուրբ գիրքը մեզի կը պատմեր  
ինչպես անոր կեանքը վերջ գտաւ,  
բայց ուրիշ յուշեր կ'ըսեն, թէ Պօղոս  
գլխատուեցաւ


Հռոմի  
մէջ,

Ներոն կայսրին  
հրամանով:





Պօղոս մահացաւ ապրած ըլլալով  
հաւատարիմ ծառան Աստուծոյ, Եւ  
բոլորին պատմելով Յիսուս  
Քրիստոսի  
մասին:



Պողոսին հրաշալի  
ճամբորդութիւնները

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,  
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Գործք Առաքելոց 16, 27, 28

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"  
Մաղմուս 119:130



վերջ



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մեջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:



Եթէ կ'ուզես մեղքերէդ ազատիլ, հետեւեալը  
ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը  
հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինծի  
համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի:  
Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես  
բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր  
կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ,  
յաւիտեան: Օգնէ ինծի որպէսզի քեզի  
համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն  
օր Աստուծոյ հետ խօսիր:  
Յովհաննու 3:16

